



Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

Ամսաթիվ՝
Վարկի համար՝

11 հունիս 2016թ.
2993 – ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի
ներդրումային ծրագիր, Տրանշ 3
03-IC-004 Հողի օտարման և տարաբնակեցման իրավական
մասնագետ

Պայմանագրի համարը և անունը՝

03-IC-004 Հողի օտարման և տարաբնակեցման իրավական
մասնագետ

Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝ 17 հունիս 2016թ.

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, Տրանշ 3, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել 03-IC-004 պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար: Պայմանագրի պայմանները և ԱԶԲ-ի կողմից վճարումները կկատարվեն Վարկային համաձայնագրի պայմաններին և ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների վարձման ուղեցույցների համաձայն: Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի ոչ մի այլ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել:

Հողի օտարման և տարաբնակեցման իրավական մասնագետ՝

ԾԻԿ-ը կվարձի ազգային անհատ-խորհրդատուի, ով գերադասելի է որ ունենա 5 տարվա աշխատանքային փորձ որպես իրավական մասնագետ և ունի բակալավրի աստիճան իրավական ոլորտում: Հողի օտարման և տարաբնակեցման իրավական մասնագետը պետք է ունենա նաև լավ աշխատանքային գիտելիքներ ՀՀ հողի օտարման ոլորտում: Պահանջվում է անգլերեն լեզվի գրավոր և բանավոր իմացություն: Հողի օտարման և տարաբնակեցման իրավական մասնագետի համակարգողի մանրամասն գործառույթներն են՝

- 1) անհրաժեշտության դեպքում կատարել առաջարկություններ Հողի օտարման և տարաբնակեցման ընթացակարգը կարգավորող իրավական ակտերին փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, համակարգել ՀՕՏԾ իրականացման ընթացքում ծագած իրավական հարցերի կարգավորումը, և արձագանքել համապատասխանաբար,
- 2) աջակցել ԾԻԿ-ի սոցիալական ազդեցության և տարաբնակեցման մասնագետին՝ ՀՕՏ գործընթացի և խորհրդատվության իրավական ընթացքն ապահովելու մեջ,
- 3) տրամադրել պարզաբանումներ՝ կապված ԱԵԱ իրավաբանների և պարտականությունների հետ, ներկայացնել մեկնաբանություններ ՀՕՏԾ և ՀՕՏԾ պահանջների վերաբերյալ, պարզաբանել և բացատրել ԱԵԱ-երին նշված փաստաթղթում սահմանված ընթացակարգի պահանջները և ՀՀ օրենսդրությունը:
- 4) մշակել մուշուներ փաստաթղթերի համար (գրառումներ, ծանուցումներ/տեղեկատվական թերթիկներ, բրոշյուրներ), ներկայացնել առաջարկներ,
- 5) աջակցել ԾԻԿ-ին՝ ձեռք չբերված գույքի փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի հաշվին ներդնելու գործընթացի կազմակերպմանը,
- 6) աջակցել ԾԻԿ-ին և ՀՕՏԾ իրականացման խմբին ԲԼՄ-ի հանդիպումներ կազմակերպելու հարցում, աջակցել ԱԵԱ-երին լուծել առկա խնդիրները վեճերի կարգավորման մեխանիզմի միջոցով,
- 7) աջակցել ԾԻԿ-ին ԱԵԱ-ի բողոքների շարունակական ստուգման և լուծման հարցում, անհրաժեշտության դեպքում կատարել դաշտային այցեր, հետազոտել գոյություն ունեցող բողոքները տեղում,
- 8) Վերահսկել ՀՕՏԾ իրականացման ընթացքը և փոխհատուցման համաձայնագրերի/պայմանագրերի կնքման գործընթացը, ինչպես նաև ներկայացնել առաջարկներ և նշել խնդիրների լուծման եղանակներն ու միջոցները անհամապատասխանությունների դեպքում,
- 9) աջակցել ԱԵԱ-երին թերի փաստաթղթերի ուղղման և նախագծման գործընթացքում, այսինքն՝ ժառանգության հետ կապված փաստաթղթեր, արտերկրում բնակվող սեփականատերերի կողմից տրամադրված լիազորագրերի նմուշ, և այլն,
- 10) համագործակցել նոտարական գրասենյակների և անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի հետ, քննարկել համաձայնագրերի և պայմանագրերի ընթացքում առաջացած իրավական խնդիրները և առաջարկել լուծումներ:

Ընտրության եղանակը՝
Պայմանագրի տեսակը՝
Գնահատված բյուջեն՝
Մասնագիտական անձնակազմի ներգրավում՝

Անհատ խորհրդատուի ընտրություն
Միանվագ վճարումներով
14,643 ԱՄՆ դոլար
11 մարդ-ամիս

Առաջադրանքի իրականացման տևողությունը՝ 242 աշխատանքային օր
Աշխատանքների սպասվելիք սկիզբը՝ 15 հունիս 2016թ.
Աշխատանքների սպասվելիք ավարտը՝ 15 հունիս 2017թ.
Խորհրդատուների տեսակ՝ ազգային անհատ-խորհրդատու

Հայտերի ներկայացում՝

Հետաքրքրված մասնակիցները կարող են գտնել և բեռնել հետաքրքրության հայտի ձևն ու ցանկացած այլ առնչվող տեղեկատվություն (անվճար) ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի հետևյալ ինտերնետային կայքից՝ <http://www.cms.adb.org>: Հետաքրքրության հայտի ձևը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև info@northsouth.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով էլեկտրոնային նամակ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան 17 հունիս 2016թ.:

Կազմակերպության անվանումը՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ:

Հասցեն՝ ՀՀ. Ք. Երևան 0002, Պուշկինի փողոց, թիվ 58 շենք

Հեռախոս՝ (+37460) 50-68-70 (-71)

Հարցերի համար դիմել՝ Սերգեյ Սարգսյան, գնումների մասնագետ

Էլեկտրոնային հասցե info@northsouth.am